# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության արևելյան գործընկերության չորրորդ պլատֆորմի «Շարժունակություն և մարդկանց միջև շփումներ» հանդիպմանը մասնակցելու նպատակով Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019 թվականի ապրիլի 9-ին

4. **Հրավիրող կողմը**
   Եվրահանձնաժողով (Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների (NEAR) հարցերով գլխավոր տնօրինություն, ԵՄ Արտաքին գործողությունների ծառայություն (EEAS)

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/*
   - Քննարկելու Արևելյան գործընկերության ծրագրի 10 տարիների ընթացքում գրանցված հաջողությունները, ձեռքբերումներն ու խնդիրները,
   - քննարկելու և նախագծելու 2020թ.-ին հաջորդող ժամանակահատվածի համար նոր ոլորտային ծրագրեր, որոնք միտված կլինեն երիտասարդների կրթության և աշխատունակության բարելավմանը:

6. **Քննարկված թեմաները**

- Հիմնական հմտությունների և գիտելիքների ձեռքբերման հնարավորություններն ու մարտահրավերները ժողովրդագրական և տեխնոլոգիական փոփոխությունների ժամանակաշրջանում,
- «խելացի մասնագիտությունների» (smart specialisations) և տեխնոլոգիաների փոխանակման համար պահանջվող հմտությունների ձեռքբերում,
- ուսուցման և կրթության գործիքակազմը թվային դարաշրջանում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

- Ելույթ Արևելյան գործընկերության պլատֆորմ 4 «Շարժունություն և մարդկանց միջև շփումներ» պլենար նիստի (կոնֆերանսի) ընթացքում, որի ընթացքում ներկայացվել են զբաղվածության ոլորտում իրականացվող հիմնական ծրագրերը, անդրադարձ է կատարվել մշակման փուլում գտնվող Զբաղվածության 2019-2023թթ. ռազմավարության և «Աշխատիր Հայաստան» հայեցակարգին, որպես առաջնահերթություններ կարևորվել են գործազուրկների և աշխատանք փնտրողների հետ անհատական զարգացման պլանների մշակման, մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի ոլորտային խորհրդատուների ինստիտուտի կայացման հարցերը և առաջարկվել է դիտարկել դրանք որպես գաղափարներ Արևելյան գործընկերության շրջանակներում ոլորտային նոր ծրագրերի համար:
- Հանդիպում-քննարկումներ հետևյալ պաշտոնյաների հետ.

- Լյուկ Դեվին, ԵՄ Արտաքին գործողությունների ծառայության (EEAS) փոխտնօրեն,
- Լոուրենս Մերեդիթ, Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության Եվրոպական հարևանության հարցերով տնօրեն,
- Անաստասիա Ֆեցի, Եվրոպական կրթական հիմնադրամի գործառնական բաժի տնօրեն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Արևելյան գործընկերության «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթղթի արդյունք 18-ից (ներդրումներ երիտասարդների հմտությունների, ձեռնարկատիրության և աշխատունակության) և արդյունք 20-ից (հետազոտական և նորարարական համակարգերի ինտեգրում) բխող ծրագրային գաղափարների մշակման և ներկայացման հետ կապված՝ դրանք հետագայում դիտարկելու Արևելյան գործընկերության շրջանակներում տրամադրվող ֆինանսական աջակցության ներքո:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է մշակել աշխատանքային ձևաչափ՝ ավելի սերտորեն համագործակցելու «ԵՄ հանուն Երիտասարդության» ծրագրի շահառու հասարակական կազմակերպությունների հետ՝ վերջիններիս կողմից իրականացվող գրանտային ծրագրերն ավելի հասցեական դարձնելու նախարարության շահառուների կարիքներին և սպասելիքներին:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արման Ուդումյան, 12.04.2019թ.